ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/39

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.02.2019թ. թիվ 01.1/26-3/2483-19 գրությամբ Ա/Ձ Արտակ Բզնունուն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 12.02.2019թ. գրության հիման վրա, 19.02.2019թ. թիվ 01.1/26-3/2483-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Արտակ Բզնունուն (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. Ա/Ձ Արտակ Բզնունուն ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված էլեկտրոնային նամակով Ա/Ձ Արտակ Բզնունին հայտնել է, որ մասնակցելով «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղատնային դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՐԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին՝ իր կողմից թույլ է տրվել սխալ՝ գնային առաջարկի «արժեք» դաշտում նշվել է միավորի գինը, ընդհանուր քանակն ավելին է և Մասնակիցը չի կարող այդ գնով մատուցել նշված քանակությամբ ապրանք:

Ա/Ձ Արտակ Բզնունին, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/39 ընթացակարգի շրջանակներում 21.02.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը:

3. «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.02.2019թ. գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կարիքների համար դեղատնային դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՐԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի որակավորման փուլում Ա/Ձ Արտակ Բզնունու կողմից սահմանված ժամկետում որակավորման փաստաթղթերը չեն ներկայացվել:

Eauction/armeps.am համակարգի միջոցով ծանուցվել է Մասնակցին, որ նա ներկայացնի որակավորման փաստաթղթերը, սակայն կրկին չի ներկայացրել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/39 ընթացակարգի շրջանակներում 21.02.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2019/39 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2019/39 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ԱՐԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արտակ Բզնունին:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 01.02.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Արտակ Բզնունին ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով, որին էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ծանուցվել է սահմանված ժամկետում և կարգով որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 20.02.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 4 արձանագրության կայացված որոշմամբ Ա/Ձ Արտակ Բզնունու հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.02.2019թ. թիվ 01.1/26-3/2483-19 գրությունը, «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 12.02.2019թ. գրությունը և կից փաստաթղթերը, Ա/Ձ Արտակ Բզնունու դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով

նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող

հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ԱՐԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արտակ Բզնունին:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 01.02.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Արտակ Բզնունին ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով, որին էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ծանուցվել է սահմանված ժամկետում և կարգով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 20.02.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 4 արձանագրության կայացված որոշմամբ Ա/Ձ Արտակ Բզնունու հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Այսպես՝ Հրավերի 3-րդ կետի 3.1 ենթակետով սահմանվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

ա. իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3-ի.

բ. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

գ. համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Ընդ որում համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության:

դ. զ. սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հրավերի 7-րդ կետի 7.12-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ Ա/Ձ Արտակ Բզնունին «ԱՐԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում խախտել է ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի

հետագա մասնակցության դադարեցմանը, քանի որ ճանաչվելով առաջին տեղ զբաղեցրած մասնակից չի ներկայացրել հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.02.2019թ. թիվ 01.1/26-3/2483-19 գրությամբ Ա/Ձ Արտակ Բզնունուն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Արտակ Բզնունուն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ